49 ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐ ՍՏԱՑԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

22.12.2014 15:12

ՀՀ փաստաբանական դպրոցի 49 շրջանավարտներ երեկ՝ դեկտեմբերի 21-ին, Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի կողմից ստացել են փաստաբանի գործունեության արտոնագրեր:
Տեղի է ունեցել Հայաստանի փաստաբանների պալատի արտագնա խորհրդի նիստ, որտեղ քննարկվել է փաստաբանի հավակնորդներին արտոնագրեր տրամադրելու դիմումների քննարկման հարցը: Խորհուրդը որոշել է բավարարել հավակնորդների դիմումները և տրամադրել նրանց արտոնագրերը պալատի խորհրդի առջև երդում տալուց հետո:
Արտոնագրեր ստացել են փաստաբանի այն հավակնորդները, ովքեր հաղթահարել են որակավորման քննությունների նվազագույն շեմը:
‘Հանդիսավոր երդվում եմ ազնիվ և բարեխիղճ կատարել փաստաբանի պարտականությունները, պահպանել փաստաբանական գաղտնիքը, պաշտպանել վստահորդների իրավունքները, ազատությունները և շահերը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և փաստաբանի վարքագծի կանոնագրքով’: Հավակնորդներին փաստաբանի այս երդում տալուց հետո հանձնվել է նրանց արտոնագրերն ու փաստաբանի վկայականները:
Արա Զոհրաբյանը ողջունելով նորընծա փաստաբաններին՝ փոխանցել է ավանդական խորհուրդներ: ‘Ամենակարևոր խորհուրդը այն է, որ փաստաբանները չներգրավվեն կոռուպցիոն ռիսկերի մեջ: Կոռուպցիան բացի իր բոլոր արատավոր հիմքերից նվաստացնում է փաստաբանի մասնագիտությունը, որովհետև փաստաբանն որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ ամբողջությամբ իր մասնագիտական գիտելիքներով է առաջ գնում: Մենք պետք է մեր գիտելիքների կատարելագործման վրա անընդհատ աշխատենք: Իսկ կոռուպցիոն ռիսկերի մեջ մտնող փաստաբանը չի փորձում ինքն իրեն կատարելագործել: Եթե մենք չկատարելագործվենք չենք կարող մեր վստահորդներին պատշաճ կերպով պաշտպանել:’-նշել է Արա Զոհրաբյանը:
Ըստ Պալատի նախագահի՝ փաստաբանների այս սերունդը ունի մեծ առավելություն՝ նրանք փաստաբանական համայնք են մտնում ունենալով փաստաբանների մեծ շրջապատ, քանի որ նրանց կողքին կանգնած են փաստաբանական դպրոցի իրենց համակուրսեցիները, ինչպես նաև ավագ ու փորձառու փաստաբաններ, ովքեր մասնակցել են նրանց դասընթացներին: ‘Դուք արդեն լուրջ թիմ եք և

միասին կարող եք հաջողության հասնել՝ -նշել է Արա Զոհրաբյանը:
Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը ողջույնի իր խոսքում շնորհավորել է արդեն գործընկեր դարձած փաստաբաններին և նշել, որ,- ‘փաստաբանության զարգացումը ուղիղ համեմատական է արդարադատության զարգացման հետ: Եթե հետադարձ հայացք նետենք փաստաբանության խնդիրներն պետք է արձանագրել, որ այսօր ունենք բավականին զարգացած փաստաբանական ինստիտուտ’:

Նորընտիր փաստաբաններին շնորհավորել են նաև փաստաբանների պալատի խորհրդի անդամներ Կարեն Մեժլումյանը և Մարտուն Փանոսյանը, ինչպես նաև Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Ռուբեն Մելիքյանը: Ռուբեն Մելիքյանը նշել է՝ ‘վստահ եմ, որ 2015թ դեկտեմբերին, երբ կրկին շնորհավորենք իրար փաստաբանների նոր սերնդի արտոնագրեր ստանալու կապակցությամբ, կկարողանանք շոշափելի արդյունքներ ներկայացնել համատեղ աշխատանքի վերաբերյալ:’:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
EREBUNI
PLAZA
ՀՀ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Erebuni Plaza
business center
ՀՀ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀԱՅԱ
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՀՊԱՆԵՔ
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

երեքունի Պլազա
բիզնես կենտրոն
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



EREBUNI
PLAZA
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })